Հայաստանի ռազմական և անվտանգության քաղաքականություն. վերականգնելով ռազմավարական հավասարակշռությունը

Ռիչարդ Կիրակոսյան*

Նախաբան

Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում Հայաստանը զարմացրել է բազմաթիվ դիտորդների՝ խորացնելով իր ռազմական ու անվտանգային հարաբերությունները Արևմուտքի հետ: Չնայած Հայաստանը երկար ժամանակ համարվում է Ռուսաստանի ամենակարևոր դաշնակիցը Հարավկովկասյան տարածաշրջանում, այնուամենայնիվ, այն կայուն կերպով պահպանել է խիստ բարդ հավասարակշռությունը Արևմտյան անվտանգության կառույցների ու կազմակերպությունների հետ: Այս կողմնորոշումը հիմնվում է ՆԱՏՕ-ի և Հայաստանի միջև ավելի սերտ և ակտիվ հարաբերությունների, ինչպես նաև առանցքային Արևմտյան պետությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայիև Իտալիայի հետ երկկողմ ռազմական համագործակցության էական ընդլայնման վրա:

Այս համատեքստում Հայաստանը աստիճանաբար և կայուն կերպով վերականգնել է ռազմավարական հավասարակշռությունը անվտանգության ոլորտում՝ որպես Արևմտյան անվտանգության և մասնավորապես Կոսովոյում, Իրաքում ու Աֆղանստանում խաղաղապահ գործողությունների եռանդուն աջակից: Այնուամենայնիվ, Հայաստանը միաժամանակ շարունակում է ցույց տալ իր դերը՝ որպես Ռուսաստանի՝ անվտանգության հավատարիմ և վստահելի գործընկեր և որպես Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) առանցքային անդամ:

Ռազմավարական ավելի շատ տարբերակներ

Ավելին, պաշտպանության ոլորտի բարեփոխումների տեսանկյունից Հայաստանը շարունակում է խորացնել իր կապերն Արևմուտքի հետ, որն արտահայտվում է երկու հիմնական մակարդակներում: Առաջինը երկկողմ հարաբերությունների մակարդակն է: Հայաստանը մեծապես ընդլայնել է իր տարբերակները, կնքելով երկկողմ համաձայնագրեր մի շարք Արևմտյան պետությունների հետ, անգամ դուրս գալով Արևմուտքի սահմաններից և ընդգրկելով Չինաստանը: Երկրորդը բազմակողմ հարաբերությունների մակարդակն է: Հայաստանը ամրապնդել է իր ինստիտուցիոնալ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ, հատկապես Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում: Սակայն Հայաստանի համար, որպես Հարավային Կովկասում ՀԱՊԿ անդամ միակ պետություն, ինչպես նաև միակ պետություն, որն իր տարածքում ընդունում է օտարերկրյա (ռուսական) ռազմաբազա, հավասարապես կարևոր է այն, որ Հայաստանը միաժամանակ ամրապնդել է իր ռազմավարական անվտանգության և ռազմական հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Այս միտումը ռազմական և անվտանգության ոլորտների բարեփոխումներում խթանել է <<փոխլրացման>> որոշակի մակարդակի ձևավորման, որը հիմնված է Ռուսաստանի հետ <<ռազմավարական դաշինքի>> և Արևմտամետ կողմնորոշման հակասական ազդակների հավասարակշռման քաղաքականության վրա, որը նպաստել է Հայաստանի ռազմավարական կարևորության ավելացմանը Արևմուտքի համար, ինչպես նաև իր դերի բարձրացմանը՝ որպես Ռուսաստանի վստահելի տարածաշրջանային դաշնակից: Չնայած Հայաստանը դեռևս կախվածության մեջ է ռուսական զինամթերքից և զեղչված զենքի պաշարներից, որոնք ձեռք են բերվել ՀԱՊԿ-ի շրջանակներում, գործառնական պատրաստվածության, դոկտրինի և արդիականացման տեսանկյունից Հայաստանի պաշտպանության ոլորտի բարեփոխումները ձեռք են բերել խիստ արևմտամետ հեռանկար:

Պաշտպանության քաղաքականության զգուշավորություն

Այնուամենայնիվ, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը իր կողմից շատ զգուշավոր էր, որպիսի առաջ չբերի որևէ մտահոգություն Հայաստանի ակնհայտ դեպի Արևմուտք կողմնորոշման վերաբերյալ, և վերջինս բազմիցս հերքել է ՆԱՏՕ-ի անդամակցության ցանկացած ձգտում և հետևողականորեն վերահաստատել Հայաստանի վճռական հանձնառությունը ամրապնդելու հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները՝ միաժամանակ խորացնելով ՀԱՊԿ-ում ակտիվ մասնակցությունը: Չնայած թվում է, թե Մոսկվան վստահ է Երևանի նվիրվածության ու հուսալիության հարցում, բայց ռուսական արձագանքը վտանգավոր կլինի երբ և եթե այն զգա ռուսական ազդեցության հնարավոր թուլացումը: Սակայն առնվազն հիմա Հայաստանը շարունակում է վճռական մնալ Ռուսաստանի և Արևմուտքի միջև հավասարակշռության ապահովման հարցում և Հայաստանը նվիրված է պաշտպանության ոլորտի բարեփոխումների ջանքերին: Այս առումով ցանկացած և յուրաքանչյուր օժանդակություն, թե Արևմուտքի և թե Ռուսաստանի կողմից, Երևանի կողմից ողջունվում է և համարվում կարևոր ներդրում:

Պաշտպանության բարեփոխումների ավելի լայն ոլորտում ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայումս մոտենում է մի կարևոր սահմանագծի, քանի որ ռազմական բարեփոխումներն այժմ պետք է առաջ բերեն <<երրորդ սերնդի>> բարեփոխումներ: Ավելի կոնկրետ, <<առաջին սերնդի>> բարեփոխումների նախնական փուլում հիմնականում կարևորվում էր արդիական և մարտունակ զինված ուժերի ստեղծումը, և սա նշանավորվեց Ղարաբաղյան պատերազմում հաղթանակով: Մարտական պատրաստականության բարձրացման և ավելի խիստ ռազմական գերակայության հաստատման հետպատերազմյան շրջանը կազմում էր ռազմական բարեփոխումների <<երկրորդ սերունդը>>: <<Երկրորդ սերնդի>> պաշտպանության բարեփոխումների ժամանակ, ՀՀ զինված ուժերը՝ որպես ինստիտուտ, ավելի են ուժեղացվել՝ նրանց ծանոթացնելով ժողովրդավարական բարեփոխումներին, որը բնորոշվում է ռազմական ուժերի քաղաքացիական վերահսկողությամբ: Վերջինս իրենից շատ լուրջ ձեռքբերում է ներկայացնում:

<<Երրորդ սերնդի>> ռազմական բարեփոխումների կարիքը

Սակայն այս պարագայում, որպիսի Հայաստանը ամրապնդի իր ռազմական առավելություններն ու ուժի գերակայությունը, ժամանակն է նոր, <<երրորդ սերնդի>> բարեփոխումների իրականացման համար: Բարեփոխումների հաջորդ մակարդակի այս հրամայականը պետք է կենտրոնանա զինված ուժերի ներքին խնդիրների, հատկապես խաղաղ պայմաններում գրանցվող մահվան դեպքերի և զինված ուժերում առկա այսպես կոչված <<դեդովշինայի>> վերացման վրա: Այս անընդունելի իրավիճակում մարտահրավերը կարգուկանոնի վորականգնումն է և զինվորական պաշտոնյաների նկատմամբ <<զրո հանդուժողականության>> նոր քաղաքականության կիրառումը: Չնայած ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը և նրա թիմը մի շարք քայլեր են ձեռնարկել իրավիճակը հարթելու և որոշ սպաների ազատելու համար, որոնք պատասխանատու են զինվորների նվաստացման, վնասվածքների ու մահվան անընդունելի դեպքերի համար, այնուամենայնիվ դեռևս անելու շատ բան կա: Օրինակ, պաշտպանության նախարարության ռազմական կրթության առաջնահերթությունները և ենթասպայական կազմի կորպուսների ընդլյանումը պետք է զարգացվեն և արագացվեն:

Ավելի կոնկրետ երեք կարևոր բարեփոխումներ պետք է իրականացվեն: Առաջին, պետք է իրականացվի ռազմական կրթության ոլորտի բարեփոխում, որպիսի ուսումնառության և նախապատրաստության հենց սկզբից բարձրացվի տեղեկացվածության մակարդակը <<դեդովշինայի>> և անպատժելիության անընդունելի բնույթի վերաբերյալ: Երկրորդ, կոչումների բարձրացման համակարգի համակողմանի բարեփոխումներ պետք է իրականացվեն, որպիսի ավագ պաշտոնյաները ստանան կոչման բարձրացում հիմնված իրենց արժանիքների, կատարողականության, ձեռքբերումների ու հաջողությունների հիման վրա, այլ ոչ թե անցյալի գործողությունների համար: Երրորդ բարեփոխումը, արդիական ֆիզիկական և հոգեբանական թեստերի ձեռքբերումն է, որոնք անհրաժեշտության դեպքում կօգտագործվեն հրամանատարական կազմի համար:

Հստակորեն, խաղաղ պայամններում գրանցված մահվան դեպքերի և <<դեդովշինայի>> մարտահրավերները փորձության կենթարկեն և կսահմանեն <<երրորդ սերնդի>> ռազմական բարեփոխումները: Դրանք կարող են դառնալ նաև մարտահրավեր նախարար Սեյրան Օհանյանի և պաշտպանության նախարարությունում բարեփոխումները նախաձեռնող թիմի համար: Բայց վերջիններս կարող են հաղթահարել այս փորձությունը, հատկապես անհատապես նախարարի կողմից զինվորական ոլորտի խնդիրների հարցում թափանցիկության և բաց համակարգի կիրառման պայմաններում՝ որպես պաշտպանության ոլորտի բարեփոխումների ծրագրի կարևոր բաղկացուցիչ: Ավելին, խաղաղ պայմաններում զոհերի թիվն ու անպատժելիությամբ պայմանավորված դեպքերը զինված ուժերում թվային առումով փաստացիորեն ներկայումս ավելի քիչ են, քան անցած տարիներին: Սակայն խնդիրները չեն թաքցվում հասարակությունից կամ քողարկվում:

Այսպիսով, Հայաստանը կայուն կերպով վերահաստատել է իր ռազմական և անվտանգության ոլորտի ռազմավարական հավասարակշռությունը: Այն նաև առաջ է անցել տարածաշրջանային և միջազգային անվտանգության և կայունության սպառողի իր նախկին դերից՝ դառնալով վերջիններիս դինամիկ աջակցող: Սակայն այս հավասարակշռությունը և ընդլայնված կարևորությունը, արտաքին ուժն ու հզորությունը պահպանելու հարցում, Հայաստանի հրամայականն այժմ ներքին խնդիրների վրա կենտրոնանալն է և նոր <<երրորդ սերնդի>> ռազմական բարեփոխումների գործընթացին լծվելը:

* Ռիչարդ Կիրակոսյանը Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրենն է, որը անկախ հետազոտական կենտրոն է Երևանում (www.regional-studies.org):